I – 21
(Col. I)



1 *a-na* d*A-šur a-bu* DINGIR.MEŠ EN GAL-*e a-šib* É.ḪUR.SAG.GAL.KUR.KUR.RA É.KUR-*šu* GAL-*i a-dan-niš a-dan-niš lu šul-mu*

2 *a-na* DINGIR.MEŠ-*ni* dNAM.MEŠ dXV.MES *a-ši-bu-ut* É.ḪUR.SAG.GAL.KUR.KUR.RA É.KUR-*šú-nu* GAL-*i a-dan-niš a-dan-niš tu šul-mu*

3 *a-na* DINGIR.MEŠ-*ni* dNAM.MEŠ dXV.MES *a-ši-bu-ut* URU d*A-šur*$_4$ E.KUR-*su-nu* GAL-*i a-dan-niš a-dan-niš lu šul-mu*

4 *a-na* URU *ù* UN.MEŠ-*šú lu šul-mu a-na* É.GAL-LIM *a-šib llb-bi-šá lu šul-mu*

5 *a-na* mLUGAL-GI.NA SANGA KÙ ÌR *pa-liḫ* DINGIR-*ti-ka* GAL-*ti ù* KARAŠ-*šu a-dan-niš a-dan-niš šul-mu*

6 *i-na* itiŠU.GAR.NUMUN.NA *mu-kin ṭè-em ad-na-a-ti* ITI *gaš-ri* DUMU.NITÁ *a-šá-red-di ša* d*En-líl kaš-kaš* DINGIR.MEŠ d*Nin-urta*

7 *ša a-na pu-uḫ-ḫur um-ma-ni šul-lu-um ka-ra-ši i-na ṭup-pi maḫ-ri iš-ṭu-ru-šu* EN <*ne-*>*me-qi* dNIN.ŠI.KÙ

8 *ul-tu* uru*Kal-ḫa* URU LUGAL-*ti-ia am-muš-ma* id*Za-ban* AN.TA-*ú i-na kiš-šá-ti-šu šam-riš e-bir*

9 UD-*3*-KAM *áš-šu ha-ṭa-am pi-i muš-tar-ḫi ka-as pu-rid-di qar-dam-mi a-na* d*En-líl u* dNIN.LL *pal-ḫiš uš-kin-ma*

10 íd*Za-ban* KI.TA-*ú ša né-ber-ta-šú pa-áš-qa-at um-ma-na-at* dUTU dAMAR.UTU *pal-gi-iš ú-šá-áš-ḫi-iṭ*

11 *i-na né-re-bi ša* kur*Kul-la-ar* KUR-*i zaq-ri ša* KUR *Lu-lu-mi-i ša* kur*Za-mu-a i-qab-bu-šu-ni e-tar-ba*

12 *i-na* kur*Su-um-bi na-gi-i pi-qit-ti um-ma-ni-ia áš-kun-ma ša* ANŠE.KUR.RA.MEŠ *ù* giš*GIGIR a-mu-ra mi-na-a-šu-un*

13 *i-na tu-kul-ti-šú-nu* GAL-*ti ša* AN.ŠÁR dUTU dAK dAMAR.UTU *ú-šal-liš-ma a-na qé-reb ḫur-šá-a-ni as-di-ra ta-lu-ku*

14 *a-na* kur*Zi-kir-te ù* kur*An-di-a ša* dURÌ.GAL dIM *ú-rì-gal-li a-li-kut maḫ-ri-ia ú-šat-ri-ṣa ni-ir-šu-un*

15 *i-ni bi-rit* kur*Ni-kip-pa* kur*Ú-pa-a* KUR.MEŠ AN.TA.MEŠ *ša gi-mir* GIŠ.MEŠ *ḫi-it-lu-pu-ma qer-bi-sún e-si-tùm-ma pit-lu-ḫu né-reb-šu-un*

16 *ki-ma* giśTIR *eri-íni* UGU *ta-mer-ti*<*-šu*>*-nu ṣil-lu tar-ṣu-ma a-lik ur-ḫi-šu-nu la im-ma-ru šá-ru-ur* dUTU-*ši e-tiq-ma*

17 íd*Bu-ú-ia* ÍD-*tum bi-ri-šu-nu a-di 26*-A.AN *e-bir-ma um-ma-ni i-na gi-ip-ši-šá la ig-lud-du* A.MEŠ *mi-li*

18 kur*Si-mir-ri-a* ŠU.SI KUR-*i* GAL-*tu ša ki-ma še-lu-ut šu-kur-ri zaq-pat-ma* UGU *ḫur-šá-a-ni šu-bat* d*Be-let*-DINGIR.MEŠ *šá-qa-at re-e-ši*

19 *ša e-liš re-šá-a-šá šá-ma-mi en-da-ma šap-la-nu šur-šu-šá šuk-šud-du qé-reb a-ra-al-li*

20 *ù ki-ma* EDEN *nu-ú-ni i-di a-na i-di me-te-qa la i-ša-at-ma pa-niš ù ar-kiš šum-ru-ṣu mu-lu-ú-šá*

21 *i-na a-ḫi-šá ḫur-re na-at-ba-ak* KUR.MEŠ-*e ḫu-du-du-ú-ma a-na i-tap-lu-us ni*(!)-*til*(!) IGI^{II} *šit-pu-rat pu-luḫ-tu*

1 *Աշշուրին, աստվածների հորը, մեծ տիրոջը, իմ տիրոջը, որ ապրում է Էխուրսագգալկուրկուրում՝ իր մեծ տաճարում՝ մե՛ծ, մե՛ծ ողջույն:*

2 *Ճակատագրերի աստվածներին և աստվածուհիներին, որ ապրում են Էխուրսագգալկուրկուրում՝ իրենց մեծ տաճարում՝ մե՛ծ, մե՛ծ ողջույն:*

3 *Ճակատագրերի աստվածներին և աստվածուհիներին, որ ապրում են Աշշուր քաղաքում՝ իրենց մեծ տաճարում՝ մե՛ծ, մե՛ծ ողջույն:*

4 *Քաղաքին և դրա մարդկանց՝ ողջո՛ւյն: Ապարանքին և դրանում ապրողներին՝ ողջո՛ւյն:*

5 *Շարրուկինը՝ լուսավոր քրմապետը, ծառան, որ պաշտում է քո մեծ աստվածայնությունը, և իր զորքը՝ շատ, շատ բարեկեցիկ են:*

6 *Դումուզի ամսին[1], երբ ժողովուրդներին հրամաններ են ուղղվում, աստվածներից ամենահզորի՝ Նինուրտայի՝ Էնլիլի հզոր ավազ որդու ամսին,*

7 *որում իմաստության տիրոջ՝ Նիշշիկուի[2] հին աղյուսակի համաձայն հանձնարարվում է զորք հավաքել և ճամբար կազմել,*

8 *ես դուրս եկա Կալխուից՝ իմ արքայական քաղաքից և համարձակորեն անցա Մեծ Զաբը դրա վարարման ժամանակ[3]:*

9 *Երրորդ օրը ես խոնարհությամբ խնդրեցի Էնլիլին և Նինլիլին զոռոգի շուրթերը սանձելու և ոսոխի ուղքերը կապ գցելու համար, ապա*

10 *Շամաշի և Մարդուկի զորքերին ես ցատկեցրեցի Փոքր Զաբի վրայով, որի գետանցումը դժվարին է, ասես այն առվակ լիներ:*

11 *Ես մուտք գործեցի Քուլդարի՝ Զամուա կոչվող լուլումեական երկրի բարձր լեռան կածանները.*

12 *Սումբու մարզում ես զորքի ստուգատես անցկացրեցի, ձիերի ու մարտակառքերի թիվը ճշտեցի.*

13 *Աշշուրի, Շամաշի, Նաբուի և Մարդուկի մեծագույն օգնությամբ երրորդ անգամ ես արշավանքս լեռների խորքն ուղղեցի:*

14 *Զիքիրտուի և Անդիայի վրա ես տարածեցի լուծը Ներգալի և Աղադի մարտակառքերի, (որոնց) զինանշանները ուղղորդում էին ինձ:*

15 *Ես անցա Նիկիպպայի և Ուպայի միջև՝ զանազան ծառերով պատված բարձր լեռների, որոնց ծածկույթը խիտ է, կածանները վտանգավոր՝*

16 *որ ստվեր են տարածում շրջակայքի վրա մայրիների անտառի պես, և նա ով դրանց արահետներով է շարժվում, արևի լույսը չի տեսնում.*

17 *իսկ Բույա գետը, որը նրանց միջև է, ես անցել եմ 26 անգամ, և իմ զորքերը վարարած ջրի քանակից[4] չվախեցան:*

18 *Սիմիրրիան մեծ լեռնագագաթ է, որը վեր է պլանում ասես նիզակի ծայր, ելնելով իր գլխով լեռների՝ Բելիթ-իլանի[5] դիցուհու կացարանի վրա,*

19 *գագաթով հասնում է երկնքին, իսկ արմատով ներքևում անցնում է դժոխքի[6] խորքերը[7]*

20 *և ձկան ողնաշարի պես մի կողմից մյուսը անցում չունի, և վերելքը դժվար է, թե առաջ, թե՝ հետ[8].*

21 *նրա կողքերում բացվում են անդունդներ և կիրճեր, որոնց նայելը սարսափ է ծնում.*

---

[1] Հունիս – Հուլիս

[2] Դյակոնովի եւ Բրեստեդի մոտ՝ *Նինիգիկուգ*: *Էա* աստծո մականունը. «լուսաչյա» (Դյակոնովի ծանոթագրությունը):

[3] Դյակոնովի մոտ՝ «ուժգին հոսանքի տեղում»:

[4] Դյակոնովի մոտ *քանակ* բառը վերաբերում է զորքերին:

[5] Դյակոնովն այս անունը տալիս է թարգմանաբար՝ *աստվածների Տիրուհի*:

[6] Բնագրում՝ *Արալլու*. Բրեստեդը այդպես էլ թողնում է:

[7] Գրեթե ճշգրիտ մեջբերում՝ *Գիլգամեշ* դյուցազնավեպից (Դյակոնովի ծանոթագրությունը):

[8] Դյակոնովի մոտ այս տողի երկրորդ կեսը բացակայում է: